Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Հանրային ծառայողի անունը, ազգանունը.**
   Լիանա Ղահրամանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Հորդանանի Թագավորություն (Ամման)՝ 2023 թվականի սեպտեմբերի 25-ից 28-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի Օզոնի քարտուղարություն (Ozone Secretariat):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Մոնրեալի արձանագրության 5-րդ հոդվածի երկրների՝ Վիեննայի կոնվենցիայի և Մոնրեալի արձանագրության ազգային պատասխանատուների, էներգաարդյունավետության ազգային քաղաքականության և էներգաարդյունավետության ոլորտում ֆինանսական մեխանիզմների ներդրման և կիրառման պատասխանատուների կարողությունների ավելացմանն ուղղված սեմինարին:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   1. Մոնրեալի արձանագրության արդյունավետ իրականացման և կիրարկման հետագա ամրապնդում:
   2. Աջակցություն սառնամատակարարման ոլորտում էներգաարդյունավետությանն ուղղված ազգային քաղաքականության պլանավորմանը և ուղղորդմանը:
   3. Նախորդ սեմինարների արդյունքներով ստացված գործնական լավ օրինակների արձանագրում և դրանց ներկայացում մասնակիցներին, որոնք կարող են կիրառելի լինել տարածաշրջանի մյուս երկրների համար:
   4. Բազմակողմանի և Կանաչ Կլիմայի հիմնադրամների միջև սիներգիայի ապահովման հնարավորությունների ուսումնասիրություն շինարարության ոլորտում էներգաարդյունավետության բարձրացման նպատակով՝ ապահովելու

օժանդակություն տարբեր ծրագրերի միջոցով՝ ներառյալ սառնամատակարարման և օդորակման հատվածը:
5. Ազգային մակարդակում ավելի լավ հաղորդակցության հաստատում համապատասխան շահագրգիռ կողմերի միջև, և ընթացիկ ծրագրերի համատեղ համակարգում՝ գործողությունների հարմոնիզացիայի ուսումնասիրման և նշված ոլորտում համընկնումների և կրկնությունների բացառման նպատակով:
6. Աշխատանքների ավելի լավ կազմակերպում ոլորտի ազգային համակարգողի և կառավարության այլ շահագրգիռ կողմերի միջև, ովքեր ներգրավված են նոր սառնարանային և օդորակման (RAC) սարքավորումների գործածման ոլորտում, որոնք պետք է լինեն ինչպես էներգաարդյունավետ, այնպես էլ պարունակեն ցածր գլոբալ տաքացման պոտենցիալ ունեցող սառնագենտներ:
7. Էներգաարդյունավետության հարցերի ընդգրկում Բազմակողմանի հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերում. սեմինարի միջոցով մտքերի փոխանակություն, որոնք կարող են ուղենշել այդ ծրագրերը, դրանց իրականացման հնարավորությունները, ժամանակահատվածը և ակնկալվող արդյունքները, որոնք կիրառելի կլինեն նշված խնդիրների հատկորոշման, թիրախավորման և լուծման համար:
8. Գործընկերների շրջանակում փորձի փոխանակման ենթատեքստում գիտելիքների փոխանցում և կարողությունների ավելացում:

**7. Հանդիպումները, ելույթները.**

Գործուղման շրջանակներում իմ կողմից նախաձեռնվել են հետևյալ երկկողմ հանդիպումները.

- OzonAction-ի ներկայացուցիչ Հալվարտ Կոպպենի հետ քննարկվել է Լեհաստան կատարվելիք մասնագիտական ճանաչողական այցի օրակարգային ու կազմակերպչական հարցերը:
- Ալբանիայի և Հյուսիսային Մակեդոնիայի ներկայացուցիչների հետ՝ KIP ծրագրի վերաբերյալ Բազմակողմանի հիմնադրամից ստացած դիտարկումները՝ հասկանալու դրանց շրջանակը և հնարավոր մեկնաբանությունները:
- Թուրքմենստանի ներկայացուցիչների հետ՝ ազգային հավաստագրման համակարգի ու դրա գործառնական ռեժիմի մասին պատկերացում կազմելու համար:
- OzonAction-ի ներկայացուցիչ Հալվարտ Կոպպենի և OzonAction-ի ղեկավար Ջիմ Քյուրլինի հետ՝ քննարկելու նոյեմբերի վերջին շահագրգիռ կողմերի լրացուցիչ երկու հանդիպումներ անցկացնելու հնարավորությունը՝ և ՀՖԱ-աներով աշխատող նոր կայանքների արգելքը սահմանելու հետագա անհրաժեշտությունը:
- UNIDO-ի ներկայացուցիչ Ֆուկույա Ինույի հետ՝ քննարկելու Հայաստանի ծրագրերի համակարգման հարցերը:

Ժողովի ընթացքում մասնակցել եմ «Սառնագենտների պատշաճ կառավարման հիմնական տարրեր» թեմայով պանելային քննարկմանը՝ որպես բանախոս և սեպտեմբերի 26-ին վարել եմ նստաշրջան:







8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ժողովի ընթացքում ընդունվել են տարածաշրջանի երկրների համար խորհրդատվական բնույթի առաջարկություններ, որոնք հասանելի են UNEP OzonAction-ի պաշտոնական կայքէջում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ դիտարկումները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**
    - Առաջարկում եմ UNEP OzonAction-ի կողմից Լեհաստան կատարվելիք մասնագիտական ճանաչողական այցի հրավերը ստանալու դեպքում դիտարկել մասնակցության արդյունավետ կազմակերպման հարցերը:
    - Առաջարկում եմ դիտարկել 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին շահագրգիռ կողմերի հանդիպման կազմակերպման հնարավորությունները՝ նկատի ունենալով ժողովի ընթացքում ընդգծված շահագրգիռների հետ համագործակցության և սիներգիզմի ապահովման կարևորությունը:

*Գործուղվող* *Լիանա Ղահրամանյան*

*18.10.2023թ.*